Աննա Բաբուշյան

Մանկության հետքերով

Կորովաբիբ մորս աչքերն ինձ ժպտացին

Սիրազեղուն մանկութ հուշեր արթնացրին,

Մայրանուշ հուշն իմ աչքերի քունը առել,

շԻմ մանկության բարի տնակն էր այցելել:

Մտաբերիկ խենթ հուշերիս հորիզոնից

Թախծադալուկ, զույգ աչքեր ինձ գուրգուրեցին,

Խորաթափանց այդ աչքերում ես մանկացա

Նրանց վճիտ խորության մեջ էլ մեծացա:

Անցալամույն մի կարոտախտ սիրտս պատեց

Անհագ սիրտս կարոտներիս լուռ փաթաթվեց,

Մի պատառիկ հուշիս լավաշից պոկեցի

Սիրով թխած հացը խղճով վայելեցի:

Եվ մանկացա՛, ու տնակս խինդով լցվեց

Իմ քույր, եղբոր ծիծաղից սիրտս ճմլվեց,

Մորս աչքերով մանկություն ներխուժեցի

Խենթ օրերիս անուշ համը վայելեցի: